**Սերը սկսնակների համար (2012)**
**121 ր**
**Տարիքային սահմանափակում՝** 16 տ.

***Ռեժիսոր՝ Տակեշի Ֆուրուսավա***
***Սցենարի հեղինակ՝ Տաէկո Ասանո***
***Դերերում՝ Տորի Մացուզակա, Էմի Տակեյ, Շոնո Հայամա***




(c)2012 "Love for Beginners" Film Partners

*«Սերն ինձ համար չէ: Ես այդպես էի կարծում»: - Ցուբակի Հիբինո*

*«Բոլոր աղջիկներն էլ նույնն են: Սերը հիանալի խաղ է»: -Կյոտա Ցուբակի*

Ցուբակի Հիբինոն պարզ և ջանասեր դեռահաս է, ում կյանքում սերը մեծ նշանակություն չէր ունեցել, մինչև նա հանդիպեց Կյոտա Ցուբակիին: Վերջինս հմայիչ, խելացի, բայց միևնույն ժամանակ գոռոզ, երկար մազերով տղա է, ով դպրոցի ամենասիրված տղան է և Ցուբակիի անվանակիցն է: Ցուբակիին հնաոճ հագուստի և պահվածքի համար ծաղրելով՝ Կյոտան հանդգնում է առաջին համբույրը պարգևել նրան և զայրացնել: Բայց երբ Ցուբակին սկսում է բացահայտել Կյոտայի կերպարի հետևում թաքնված մեղմ բնավորությունը, աստիճանաբար սկսում է տարվել նրանով: Առաջին ժամադրությունից մինչև առաջին համբույր Ցուբակին սկսում է ունենալ այնպիսի զգացմունքներ ու ապրումներ, որոնք ի հայտ են գալիս միայն առաջին սիրո ժամանակ: